ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հունվարի 13-ից մինչև 2023 թվականի ապրիլի 13-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայություններ բաժնի փորձագետ Հասմիկ Վեզիրյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ.

- պատրաստել եմ քաղաքացիների դիմումների, այդ թվում առցանց ստացված դիմումների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, ՀՀ նախագահի աշխատակազմերից և այլ մարմիններից ՀՀ ԱՍՀՆ վերահասցեագրված քաղաքացիների դիմումների պատասխանները և ապահովել դրանց համապատասխան ընթացքը,
- պատրաստել եմ մի շարք պաշտոնական գրությունների նախագծեր՝ նախարարություններ, գերատեսչություններ և կազմակերպություններ ներկայացնելու համար, ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված հանձնարարականների, այլ պետական և ոչ պետական մարմիններից ստացված գրությունների պատասխանների նախագծեր,
- պատրաստել եմ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 Հավելվածի 8-րդ կետի հաշվետվությունները,
- մշակել և պաշտոնական շրջանառության մեջ եմ դրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1924-Լ և Հայաստանի Հանրապետության

կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2082-Լ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 1773-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Կացարանի կարիք ունեցող ընտանիքների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը պետական աջակցություն տրամադրելու նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը,

- իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1924-Լ որոշման շրջանակներում քաղաքացիներից ստացված դիմումների ուսումնասիրություն և ապահովել դրանց համապատասխան ընթացքը,
- վարչության պետի հանձնարարությամբ կազմել եմ գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր,
- վարչության պետի հանձնարարությամբ կատարել եմ բաժնի գործառույթներից բխող այլ աշխատանքներ:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ

ՀԱՍՄԻԿ ՎԵԶԻՐՅԱՆ